ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ

07.05.2025թ. ք.Մարտունի

Նիստի մասնակիցներ.

1. Արմեն Շահինյան-հանձնաժողովի նախագահ
2. Վարազդատ Միերյան-հանձնաժողովի նախագահի տեղակալ
3. Ինգա Շահումյան-հանձնաժողովի քարտուղար
4. Տարոն Արշակյան-հանձնաժողովի անդամ
5. Հայկ Հովհաննիսյան-հանձնաժողովի անդամ
6. Արմեն Եղոյան-հանձնաժողովի անդամ
7. Անի Մալխասյան-հանձնաժողովի անդամ
8. Արմեն Սարիբեկյան-հանձնաժողովի անդամ

Օրակարգ.

- Մարտունի համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման վերաբերյալ մանրամասների ներկայացում:
- Գործընթացի մեկնարկի նպատակով կատարված աշխատանքների ներկայացում:
- Հետագա կատարվելիք գործողությունների քննարկում:

Լսեցին.

<u>Հանձնաժողովի նախագահ Արմեն Շահինյանին,</u> ով հանդես եկավ բացման խոսքով, հակիրճ ներկայացրեց մասնակցային բյուջետավորման նպատակները, օգուտները, չափանիշները, ինչպես նաև գործընթացքը մեկնարկելու նպատակով համայնքի կողմից ընդունված իրավական ակտերը՝ համայնքի ավագանու որոշում, համայնքի ղեկավարի որոշում:

Հանձնաժողովի նախագահի կողմից տրվեց հանձնարարական իրազեկման փուլը ըստ ժամանակացույցի իրականացնելու, որի համար անհրաժեշտ են հետևյալ գործողությունները՝

- Մասնակցային բյուջետավորման գործընթացի վերաբերյալ իրազեկում՝ համայնքապետարանի պաշտոնական կայքէջերով և ԶԼՄ-ներով և այլ հանրամատչելի տարբերակներով
- Հանրային քննարկումների,ժողովների և լսումների կազմակերպում:

Սույն փուլի իրականացման նպատակն է բնակչությանը գործընթացին մանրակրկիտ ծանոթացումը:

<u>Հանձնաժողովի նախագահի տեղակալ Վարազադատ Միերյանին,</u> ով ևս ներկայացրեց գործընթացի վերաբերյալ մանրամասներ, որոնց շուրջ նիստի մասնակիցները ունեին հարցեր:

<u>Հանձնաժողովի անդամ Հայկ Հովհաննիսյանին,</u> ով ներկայացրեց մանրամասներ առաջարկությունների ներկայացման, քվեարկության կարգի և քվեարկության ամփոփման մասին:

Առաջարկվեց.

1. Ինգա Շահումյան-հանձնաժողովի քարտուղար

Առաջարկեց համայնքի մարդաշատ վայրերում տեղադրել գործընթացը մանրամասն նկարագրող պաստառներ՝ իրազեկման փուլը պատշաճ իրականացնելու նպատակով:

2. Հայկ Հովհաննիսյան-հանձնաժողովի անդամ

Առաջարկեց մասնակցային բյուջետավորման վերաբերյալ տեղեկություններ տարածել ԶԼՄ-ների միջոցով, «Գեղամա» մարզային ալիքով:

Որոշվեց.

- Սկսել իրազեկման գործընթացը՝ հիմնվելով սահմանված ժամանակացույցի վրա:
- Մարտունի համայնքի պաշտոնական կայքում և համյանքի մարդաշատ վայրերում իրազեկող տեղեկատվության տարածում:
- Կամզակերպել հանդիպում համայնքի 16 բնակավայրերի վարչական ղեկավարների հետ:

Հանձնաժողովի նախագահ՝ Ա.Շահինյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Ի.Շահումյան

Նիստի մասնակիցներ՝

Վ.Միերյան

Տ . Արշակյան

Հ.Հովհաննիսյան

Ա.Եղոյան

Ա.Մալխասյան

Ա.Սարիբեկյան